շահուն համար խստութեամբ կը դատէին. ինչպէս հետեւեալ դիպուածն ալ, որ վերոյիշեալներէն առաջ եղած է (1643)։ Յակոբ որդի Սահակայ և Պաչի՝ որ այն ատեն Հայոց մէջ գլխաւոր սէնաալք էին, ազգայնոց և Պարսից համար երկու տուն վարձեր էին. Նոր արդարոբեան կոչուած պաշտօնեայք պարտաւորեցին զանոնք իրը յանցաւոր. վասն զի տուն կամ իջեւան վարձքի տուողք (albergatori) պարտական էին, ըստ օրինաց, հարկ կամ մաքս մի վճարել. Պալի և Յակոբ բողոքեցին գրով առ Դուքսն (23 սեպտեմբ.), թէ իրենց ըրածն ոչ վարձքի տալ էր, այլ ձրի բնակութիւն տալ, որպէս զի յորդորուին Հայք աւելի շատ գալ և շատ վաճառք բերել։ Ցէրութիւնն յանձնեց Ե Գիտնոց քննել. ասոնք արդարացուցին ամբաստանեալները, վկայելով որ անոնք ոչ թէ վարձք կ'առնուն ի վաճառականաց, այլ անոնց ծախսուած վաճառքէն օրինաւոր սանսէրէքը. և պէտք չէ այս բանիս համար նորութիւն կամ արգելք մ'ընել Հայոց, այլ թողուլ իրենց ազատութեանը։ — Քանի մի տարի վերջը (1650) այսպիսի բան մ'ըրին նոյն պաշտօնեայք ուրիշ երկու Հայ վաճառականաց դէմ (Մարտիրոս և Պետրոս), որք 140 դուկատի տուն մի վարձեր էին իրենց ազգայնոց համար. բողոքեցին Հայք իրենց նեղութիւն տուողներուն դէմ. տէրութիւնն ալ ըստ սովորութեան յանձնեց Ե Գիտնոց. ասոնք ալ արդարացուցին զՀայս, մանաւանդ թէ յարմար և լաւ համարեցան որ Հայք միատեղ կենան՝ քան թէ ցրուած. և չըլլայ որ այս բանիս համար նեղուելով՝ փոխանակ ի Վենետիկ գալու՝ երթան ի Լիվոռնոյ կամ ի Ջենովա։

Շարունակելի

ԻԾԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ

Ա.

Նէապոլիս Գաբրի և Իսկիայ կղզիները ունի, Կոստանդնուպոլիս ալ Իշխանաց կղզիները։ Նէապոլսեցիք որչափ կը պարծին իրենց ծովածոցին գեղեցիկ զարդուցը վրայ, նոյնչափ ալ Պոլսեցիք իրենց հանգստեան և զուարճութեան կղզեաց, որք հրաշալի տեսարան մը կը պարզեն, Մարմարայի ծովուն մուտքին վրայ։

digitised by A.R.A.R.@

Գաբրի անուանի եղած է թէ իր բնական գեղեցկութեամբը, և թէ Տիբերիոսի այդ կղզւոյն մէջ գործած անգթութիւններովն. նոյնպէս ալ Բրոդիի, Մնտիկոնի, և Բրինքիբոյի վանքերուն մէջ փակուած թագաւորաց և թագուհեաց և ազնուական աքսորելոց տխուր պատմութիւնները՝ այլ և այլ յեղափոխութեանց պատճառաւ, որովք լի է Բիւզանդիոյ պատմութիւնը, անուանի ըրած են այս կղզիներ, որք զուարթ գեղեցկութեամբն հանդերձ Մրիջին դարու ամենէն ազիտալից տեղերն եղած են։ Չկայ տեղ մը որ այնչափ ցաւալի աղէտներ հանդիպած ըլլան, ինչպէս այս կղզեաց մէջ, որք մէկ մէկ կսկրծեցուցիչ խրատներ են մարդկային մեծութեան ընդունայնութեանը։

Այս տեսակէտով իսկ պէտք է որ պատմագիր և մտախոհ մարդիկ այցելութիւն մը տան այս կղզեաց։ Չկայ աշխարհիս մէջ ուրիշ տեղ մը ինչպէս այս կղզեաց մէջ, ուր այնչափ մեծ իշխանաց և իշխանուհեաց ողբը լսուած ըլլայ, որք կայսերական պալատան փառաւորութենէն՝ այս կղզեաց վանքերուն մէկուն սենեկին մէջ բանտարկուած են։ Միացուր այս յիշատակաց հետ նաև այս մասը Աբշիպեղագոսին գեղեցկութիւնը, որ աչքերը կը շացընէ նոյն իսկ անոնց, որք Իտալիոյ և Սիկիլիոյ գեղեցիկ տեսարանաց վրայ կը զմայլին. վասն զի տեղ մը չկայ ուր մարդուս աչքը գեղեցկագոյն ծովեզերաց, հաճոյատեսիլ ծոցերու, հեռաւոր մեծայաղթ լեռներուն վրայ հանդչի. չկայ ուրիշ տեղ մը, ուր կանաչութիւնը այնչափ կենդանի և երփն երփն գոյն ունենայ. վերջապէս չկայ տեղ մը ուր ծովուն ջրերը այնչափ կապտագոյն ըլլան, ուր փափկութեամբ հազարումէկ հովանաւոր խորշեր, հազարումէկ բանաստեղծական դարեր թռչին։ Ասկէ կը հասկընանք թէ ինչու Իշխանաց կղզիները, որք առաջ այնչափ արցունքներով թրջած են, հիմակ ալ այնչափ 'ի պատուի են և դրուատեալ. հաճոյական տեղ մըն է պանդխտութեան անոնց համար, որք կը շրջին անցելոյն տխուր յիշատակաց և ներկային զմայլեցուցիչ տեսարանաց մէջ։ Թէպէտ և ժամանակն, որ միշտ փոփոխութեան մէջ է, այս տեղուանքս ալ, մանաւանդ Բրինքիբոյ՝ Իշխանի կամ Մեծ ըսուած կղզին, Կ. Պոլսոյ քրիստոնեայ հարուստ վաճառականաց ամարանոցն ըրած է, և հին աքսորեալ բանտարկելոց ողբոց ձայնին տեղ՝ ամառը սրճանոցաց ժխորն և բազմատեսակ արևելեան և արևմտեան նուագարանաց աղմկալից ձայներն տիրած են։

Վալիտէ Սուլթանին մեծ կամրջոյն վրայէն, որ Ստամբոլն և Գալաթիայն իրարու կը միացնէ, շոգենաւ մտնալու է Իշխանաց արշիպեղագոսը երթալու համար, որ թրակեան Վոսփորի հարա-

digitised by A.R.A.R.@

ային մուտքին վրայ, Մարմարայ ծովուն մէջ, Կոստանդնուպոլսոյ հարաւային արեւելեան կողմը կ'իյնայ։ Ամառը այս կղզիներս գացող շոգենաւերը միշտ լեցուն կ'ըլլան։ Քիչ մը ուժով փչէ հոգին Պրոպոնտոսի մէջ վրայ, շոգենաւուն ճճաղէն կ'իմանայ ճամբորդը որ Ոսկեղջիւրէն հեռացած է, և Մարմարայի ծովը, որչափ որ պզտիկ ըլլայ, մեծ ծովու մը ամէն անախորժ յանկարծական փոփոխութիւնները կրնայ ունենալ։ Երբեմն ճոճումը և տատանումը խիստ սաստիկ կ'ըլլայ։ Գեղեցիկ արեւելուհիք որ իշխանի կղզին անհամբեր կը վազեն իրենց նորելուկ արդուզարդն ցուցընելու, գոյներնին կը նետէ և լուրջ կը մնան, և բոլոր իրենց պճնասիրութիւնն կը կորսնցնեն, նաւուն ելեւէջը կը կրթնին և անշարժ՝ բաց ծովուն վրայ աչուրնին կը դարձնեն։ Անգրիացիք իսկ, որ աներկիւղ ճամբորդներ են, Սուրբ Սոփիայի մզկիթն և շուկայն (Պազար) պտոյտ մը ընելնէն վերջը, կղզիները պտըտելու կ'երթան, որ կը յիշեցնէ իրենց Ցուվրի և Պուլոնեի անդը. այստ ամենայնիւ իրենք ալ կ'ուզեն շուտով նաւահանգիստը հասնիլ, և այս ճամբորդութեան վերջը տեսնալ։ Վասն զի այս անցքը որչափ որ ալ Մանչի անցքէն կարճ է, բայց երբեմն անոր չափ նեղացուցիչ է։ Բայց այսպիսի դէպք քիչ կը հանդիպին. շատ անգամ Թրակիոյ և Բիւթանիոյ կապոյտ երկնից տակ՝ երկուց ծովուց մերձաւորութեամբը բարակ և թեթեւ օդոյն մէջ՝ որ շարունակ կը զովանայ և իբր թէ կը լուացուի, ախորժելի թեթեւ հով մը կը փչէ, զովացնելով կիզիչ արեւ մը։ Այս հանդարտ և թափանցիկ ջրոց վրայէն կը սահի, կ'անցնի կղզեաց շոգենաւը։ Ընդհանրապէս Սկիւտարն անցնելէն վերջը որ հին Բիւզանդացւոց Ոսկէ — քաղաքն (Թրիւսոպոլիս) է, իր զառէջքին վրայ բազմամարդ տուներով և զինուորանոցներով, ճերմակ մինարէներով, բարձր գմբեթաւոր մզկիթներով, անուանի տաճկաց գերեզմնատամբ, որ շիրմաց և փոչոտած բարձր նոճիներու անտառ մին է, շոգենաւն Քառը–Քէյ կը հանդիպի։ Ասիոյ հին Քաղկեդոնն, ուսկից Խոսրով Պարսից թագաւորը տասը տարի գողացուց Հերակլի լեգէոնները։

Քաղկեդոնի մէջ կը ցուցընեն պզտիկ մատուռ մը, ուր ըստ աւանդութեան, գումարած է կ'ըսեն, հռչակաւոր տիեզերական ժողովն, յորում վեց հարիւր Հայրապետք և վարդապետք դատապարտեցին Եւտիքեսի աղանդն, և որոշեցին որ Կ. Պոլսոյ աթոռը, յետ Հռովմայ, նախապատիւ սեպուի քան զայլ պատրիարգական աթոռս։ Բայց այս մատրան մէջ այնպիսի ժողով մը չկրնար գումարուած ըլլալ, վասն զի տեղն այնչափ պզտիկ է որ անկարելի է այդչափ պատկառելի անձինք հոն ողմած ըլլան։

digitised by A.R.A.R.@

Քաղկեդոն հելլենական Բիւզանդիոնի հակառակորդը, և հրաշակաւոր տիեզերական ժողովքին քաղաքն, որ ատենոք գեղեցիկ կայսերական պալատներ ունէր, խառն բիւզանդական աղնուական ընտանեաց մեծամեծ տուներուն, այժմ կոստանդնուպոլսոյ շրջակայից գլխաւոր գիւղական բնակութեանց մէկն է։ Ցաճիկ փաշաներ, յոյն վաճառականներ, և նաև Եւրոպացիք, մանաւանդ Անգղիացիք՝ ծովեզերեայ տուներ և ամարաստուններ շինած են, որոնց երկայն՝ ճերմակ, զուրկ 'ի ճարտարապետութենէ ձեւերն, հեռուէն կ'երևան ծովեզերաց վրայ և դէպ 'ի դաշտերն։ Բազմաթիւ մեծ ու պզտիկ շոգենաւներ կ'երթան կու գան ընդ մէջ մայրաքաղաքին և այս արուարձանիս։

Քաղկեդոնէն անմիջապէս վերջը Մարմարայի ծովը կը սկսի, և շոգենաւները շիտակ դէպ 'ի Կղզեաց կողմը կ'ուղղուին, որոնց շոգեպատ եզերքներն արծաթափայլ լուսոյ մէջ՝ երթալով շուտ շուտ կը մեծնան։ Ճամբորդը հոս Իզնիմիտին խոր ծոցին մուտքին վրայ կ'ըլլայ, որուն արևելեան վերին ծայրին վրայ կիյնան Իշխանաց կղզիներն։ Ձախ կողմն է Բիւթանիոյ ծովեզերքը, որուն վրայ կը բարձրանայ երկայն լերանց շղթային մէջ Ս. Օքսենտիոս (Ջամլըճա) լեռը, որ բիւզանդացի ճգնաւորաց տեղն էր։ Դիմացը կ'իյնան Կղզիներն, որոնց ետուէն կ'երևնայ բարձր և ժայռուտ հրուանդանը, որ Մուտանիայի ծոցը կը ծածկէ, և Իզնիմիտի ծոցին հարաւային ծայրն կը բարձրանայ։

Հեռուէն կ'երևնայ այս հրուանդանիս Պոզպուռնու գլուխը, այն է՝ հին Պոսիդոն հրուանդանը, որուն վրայէն Ողիմպոս լեռան ձիւնը ճերմակ կը փայլի։ Այս մեծայաղթ լերան գեղեցկագոյն տեսքը առաւօտն է, երբոր արևը կը ծագէ և իւր ճառագայթներն շիտակ լերան վրայ կը զարնեն, և ասոր ճերմակութիւնը կը փայլեցընեն կապոյտ երկնքին վրայ։

Մոտա Պուռնուին հրուանդանը, որ Մեծ Մոտա Պուռնու կ'ըսուի, և Քաղկեդոնին մասն է, շոգենաւով Կղզիներն երթալու ժամանակ, քիչ մը ատեն կը ծածկէ Եւրոպիոյ հին նաւահանգիստը, որուն անունը մարդուս միտքը կը բերէ Բուզանդիոյ ցած պաշտօնէից մին, ծեր և յանդուգն ներքինին, որ Ռուբինոսի յաջորդեց Արկադիոս կայսեր քովը։ Ճիշտ այն Եւրոպիոյ նաւահանգստին եզերքը հանդիպեցաւ Մօրիկ Ցիբեբիոսի այն եզերական վերջին տեսարանը, յորում Ցունական կայսրութեան լաւագոյն կայսերաց միոյն կեանքը զոհ գնաց փոկաստ յաղթութեանը, որ բաղդին օգնելովն՝ հասարակ սպայութենէ յանկարծ իշխանութեան հասած էր անլուր յեղափոխութեան մը մէջ։ Մօրիկ տեսնալով ամենէն լքեալ և ամբողջ կոս-

digitised by A.R.A.R.@

տանդնուպոլիս խռովութեան մէջ, պալատէն փախաւ ծպտեալ, և կայսրուհւոյն և իւր տղոցը հետ նաւակի մը մէջ ցատկելով՝ Բիւ-թանիոյ ցամաքը կ'ուզէր անցնիլ· բայց սաստիկ մրրկէ մը բըռ-նուելով՝ քշուեցաւ մինչև Սուրբ Աւդոնոմոս մենաւոր եկեղեցւոյն եղերքը, Նիկոմիդիոյ մօտ։ Իրեն հետևէն ինկնող զինուորներն հոս զինքը բռնեցին և Եւտրոպիոյ նաւահանգիստը բերին։ Կապած ծովեզերքը տարին զինքը, իւր պալատին և մայրաքաղաքին դի-մացն՝ նոյեմբերի տխուր առաւօտ մը։

Մօրիկ իւր արիութիւնը և հաստատամտութիւնը բնաւ չկոր-սընցուց, և իր թշուառութեանը վրայ փիլիսոփայաբար կը մը-տածէր, ինչպէս կ'ըսէ Թէոփանէս։ Իւր տանջանքը երկայն տե-ւել տալու մտքով՝ իր աչացը առջև գլխատեցին իր հինգ տղաքը։ Ամէն մէկ տապարի հարուածին՝ անմեղ զոհերուն արիւնը հօրը վրայ կը ցաթկէր, որ իւրաքանչիւր անգամին կը հառաչէր։ «Արդար ես դու, Տէր, և արդար են դատաստանք քո»։ Վերջը առանց ամենևին վախնալու դահճին դիմացը անցաւ, որ ան-համար ժողովրդեան մը առջև, ցաթկեցուց անոր ճերմակ մազե-րով գլուխը իւր սիրելեաց խարտեաշ մազերուն մէջ։ Վեց դի-ակները ծովը նետեցին, և մնոտիապաշտ Բիւզանդացիք գէշ նշան սեպեցին՝ երբ ծովը քանի մը անգամ դէպ 'ի ցամաք նե-տեց այն դիակները. կարծես թէ ալիքներն անգամ չէին ուզեր այդպիսի մեծ եղերան մասնակից ըլլալ։ Գլուխները փոկաստ տարին, որ ցիցերու վրայ գամել տուաւ զանոնք, ապստամբ բանակին վրանները դիմացը, Էգթոմոնի դաշտին վրայ (1)։ Զինուորները խել մը նախատելէն վերջը՝ այն խեղճերուն գլուխ-ներն, թոյլ տուին քանի մը անոնց հաւատարիմ մնացողաց, որ տանին թաղեն կայսերական ընտանեաց այս վերջին մնացորդ-ներն։

Մոտա Պուռնու հրուանդանը Եւտրոպիոյ նաւահանգստին հա-բաւային եղերքը բռնած է, և երեք մաս կը բաժնուի նաւահան-գըստին խորութեան ուղղութեամբը Մեծ, Միջին և Փոքր Մոտա անուամբ։ Միջինին վրայ աչքի կը զարնէ բաւական բարձր և լայն կարմիր և ճերմակ գծերով չէնք մը, որ ժամանակաւ իջե-ւան մըն էր, և հիմայ վենետիկ կեդրոնին ունեցող Մխիթա-բեանց գիշերօթիկ վարժարանն եղած է։

Սակէ անդին ծովեզերքը՝ որ բաց կլոր խորշ մըն է, ծառեր և քանի մը տնակներ կ'երևան միայն մինչև ծայրն. ուր է հին Հէրիոնի հրուանդանն. որուն վրայ կը բարձրանայ հիմա 'ի

1 Կոստանդնուպոլսոյ պարիսպներէն դուրս։

digitised by A.R.A.R.@

Ցունաց Ֆանարաքի և 'ի Ցաճկաց Ֆէնէր—Պաղճէ անուանած փարոսն։ Այս մանր թերակղզին որ Ֆէնէր—Պուռնու կ'ըսուի, Կոստանդնուպոլսոյ շրջակայից գեղեցկագոյն տեսակէտներէն մէկն է։ Այսկէ մայրաքաղաքին մինարէներով զարդարած տեսքը շքեղագոյն է, քան ամէն ուրիշ տեղուանքէ։

Ցուստինիանոս անուանի աշխարհաշէն կայսրն նոյն տեղը պալատ մը շինել տուած էր, շատ մը եկեղեցիներ, մեծ բաղնիքներ և միւսիսնազարդ դռներ ժամանակին ճաշակովն։ Թէոդորա ամբարտաւան բաղդախնդիրն շատ անգամ եկած է հոս, ամառը անցնելու համար, Բիւզանդիոնի ծանր տաքէն և բարակ փոշիէն փախչելով։

Հոն այն արշապանին աղջիկը կուգար քիչ մը հանգիստ առնելու համար, փախչելով քաղաքագիտական յուզմունքներէ, կրկէսի կառաղի տեսարաններէն և կամ մեծամեծ ապստամբութեանց վախերէն, և Պրոպոնտոսի բարակ օդը ծծելով՝ քանի մը նոր յարձակմանց կամ նոր դրից ծրագիրներ պատրաստելու համար։

Իշխանաց անուամբը կղզիները և կղզեակներն եօթն են, Բիւթանիոյ ծովեզերքին դիմաց զուգահեռական ուղղութեամբ, որք թէ ընդարձակութեամբ և թէ կարևորութեամբ իրարմէ շատ մեծ տարբերութիւն ունին։ Հար. արևմտքէն հիւս. — արևելք ուղղութեամբ շարուած են, Բրոդի (Գնալը), Մնդիկոնի (Պուրգաս), Բիդիս, Հալքի կամ Խալքի (Հէյպէլի), Բրինքիբոյ (Պէյիւք ատա), Մնդէրովիթոս և Նիանտրոյ։ Երկու ուրիշ կղզեակք ևս կան, Բլադի և Օգսիա, աւելի արևմտեան կողմն բաց ծովուն վրայ, և կրնան այս արշիպեղագոսին մասն սեպուիլ։

Բրինքիբոյն ամենէն զարդարունը և այս կղզեաց թագուհին կրնայ ըսուիլ։ Այս կղզւոյս քաղաքը, Բերայի և Ֆէնէրի, կ. Պոլսոյ արուարձանաց, յոյն և հայազգի վսճառականաց և սեղանաւորաց դաստն ամարաստոնտներովը զարդարուած է, և մեծագոյն մասն Մսճառ ըսուած ծառուղւոյն վրայ է, և միւս կղզեաց ծովուն վրայ աքանչելի տեսարան մը ունի։ Կղզւոյս սոճեաց գեղեցիկ անտառներն, հիանալի տեսակէտներն, մանաւանդ Սուրբ Գէորգ (Այիեորկի) վանքին տեսարանը, որ կըղզւոյս բարձրագոյն կէտն է, բոլոր արևելից մէջ անուանի եղած են։ Վերջը կուգայ Հալքի, որ հիմակ ալ անուանի է իր գեղեցիկ վանքերուն համար։ Նաև հիանալի է իր եղերացը փոփոխակի տեսարաններովն, ծոցերուն գեղեցկութեամբը և ընդարձակ հովանաւոր ծառերովն։ Որչափ այս երկու մեծ կղզիները այս արշիպեղագոսին գեղեցկութեան համար հանած են իրենց կանչութեամբը և անտառներովն, այնչափ ալ Բրոդի և Անդէ-

digitised by A.R.A.R.@

բովիթոս (կամ Դէրէպէնթոս Սէտէֆ անասը) մերկ են և քարուտ։ Անդիկոնի որ շատ տարբերեալ 'ի վեր ծառերն կորսընցուցած էր, մեր օրերը տնկեալ նոր անտառներով կը ծածկուի իրեն արևելեան զառէլին վրայ։ Իսկ Բիդիս և Նիանտրոյ միայն պարզ ժայռեր են, և ամենևին գեղեցկութիւն մը կամ կարևորութիւն չունին։

Իշխանի կղզեաց արշիպեղագոսը հիմակ գրեթէ միայն զուարճութեան տեղ մը եղած է։ Բրինքիբոյ 'ի Ցունաց և 'ի Հայոց յաճախեալ է, իսկ տաճիկք քիչ են, բաց 'ի քանի մը եւրոպական սովորութիւններ սիրողներէ։ և Կոստանդնուպոլսոյ առանէն 'ի վեր, Ցունաց տեղն սեպուած է։ Ամառը երբ հարաւային հովը կը փչէ, օդը աւելի տաք կ'ընէ՝ քան թէ Վոսփորոնի գիւղերն, որք Սև ծովէն փչող հովերէ և ծովուն ջրոց ընթացքէն միակերպ ախորժելի զովութիւն մը ունին, անոր համար այս կղզիներս աւելի գարնան և աշնան յաճախեալ են։

Ինչպէս առաջ՝ հիմակ ալ սովորութիւն է որ շատ Բերայի մեծ ընտանիք մայիս ամսոյն քանի մը չաբաՀները կղզին կ'անցընեն, Ենիքէյ, Թարարիա կամ Պէօյիւք-Ցէրէ ամառը հաստատուելէն առաջ։ Բրինքիբոյ աղէկ իկևաններ ունի, օդը շատ մաքուր է, ցուրտը քիչ զգալի, բաղնիք սիրողները կ'ըսեն թէ ամէն տեղէ աւելի այս կղզւոյս ծովուն ջրերն նախադասելի են։ Այս պատճառաւ, նաև դրից գեղեցկութիւնը, հիանալի տեսարանը և հաղորդակցութեանց ալ դիւրութիւնը (մէկ ժամ պէտք է կղզիէն Ստամպոլ երթալու, և օրը քանի մը անգամ շոգենաւներն կ'երթևեկեն) այս կողմերս շատ յաճախելի կ'ընեն։ Բերայի փրանկները կղզին շատ կ'երթան, մանաւանդ Գաղղիացիք, Անգղիացիք։ Ոմանք ամարատուն ունին, մանաւանդ այս վերջի տարիներս, բարձր ընտանիքներ, որ բոլոր ամառը այս կղզիներս կ'անցընեն։

Աւելի չափաւոր վիճակ ունեցողք ալ կիրակի և տօն օրերը կուգան իրենց ընտանիքովը։ Այս միօրեայ հիւրերն, և անոնք որ ոչ ամարատուն և ոչ բարեկամ տուներ ունին, Վոսփորի վրայ աւելի այս կղզիները պտտելու կ'երթան։

Կիրակիները շատ բազմութիւն կ'ըլլայ մեծ կղզին, իկևանները լեցուն են հիւրերով, նոյնպէս զարդարուն պատշգամներն, ուսկից արք և կանայք գեղեցիկ տեսարաններ կը վայելեն, Ասիոյ ծովեզերաց և նոյն ծոցին վրայ՝ ուր մեծ ու պզտիկ շոգենաւուց երթևեկութիւնը և երաժշտութեանց ձայնը ձգիչ հրապոյրք մ'են, ծովուն եղերքը ցիցերու վրայ չինուած սրճանոցներուն մէջ։ Միօրեայ շրջագայողաց ոմանք կղզւոյն ներսերը կը մտնան,

digitised by A.R.A.R.@

և ամէն մէկ ծառի խումբ մը գիւղական սեղանատուն մը կը դառնայ։

Հալբի, Անդիկոնի և Բրոդի, միչակ մարդկանց տեղերն են. տունի օրերը փայտաշէն տուները, որք կղզեաց բլուրներուն վրայ աստիճանաբար շինուած են, կը լեցուին բնակչաց աղգականներովն և բարեկամներովն, որ կուգան քանի մը ժամ, փախչելով Բանկալդիի և Բերայի մեծ փողոցին կիզիչ փոչիներէն կամ Կալաթիոյ նեղ, անել և տաղտկալի ճամբաներուն մէջի գրասենեակներէն, որոնց շատը հին Յենովացւոց ժամանակէ մնացած խաներու մէջ են։

Այս է ահաւասիկ բնութեան ամէն պանչելեաք զարդարեալ կղզեաց արդի վիճակը։ Ինչ տարբերութիւն առաջուան ունեցած կացութենէն Բիւզանդական կայսրութեան ժամանակ. այն պատերազմելից ատեններէ, յորում ամէն օր կռուի կեանք մըն էր, երբ ամէն օր նոր դաւադրութիւն մը դուրս կ'ելլէր։ Այն ատեն կղզեաց տեսարանը արդի ժամանակին չէր նմանէր, այնչափ տխուր լուռ և միայնութիւն էր այն ժամանակ գեղաձիծաղ ծովուն մէջ տեղը, որչափ հիմայ զուարթ և կենդանի է։ Սոճեաց ընդարձակ անտառներ, մրտենեաց և բեկենեաց թաւուտք, որոնց մնացորդը դեռ ևս կը ծածկեն Բրինքիբոյի և Խալքիի բլուրներուն գագէլքը, յայնժամ կանաչ միաձև վերարկուի մը պէս բոլոր կղզիներն կը պատէին։ Ցեղ տեղ կանաչութեանց մէջ բաց տեղուանք կը տեսնուէին, քանի մը վանքեր, որ ցած և առանց ճարտարապետութեան չէնքեր էին, լուին ապաստանարանք. խստատեսիլ և միաձև բնակարաններ, կենդանի գերեզմաններ, քիչ հեռու այն մայրաքաղաքէն՝ որ անցած դարերուն ամենէն գործունեայ և ամենէն աւելի աղմկալից քաղաքն եղած է։ Այս սրբազան չէնքերն խումբ մըն էին եկեղեցեաց, աղօթատեղեաց և մատրանց, վանահարց և կրօնաւորաց բնակութեան մասն։ Կային նաև առանձնական խցիկներ ճգնաւորաց։ Ասոնց բոլորտիքը քանի մը մշակեալ դաշտեր ալ կային վանքերու սեփական։ Աղքատ վանականք իրենք կը բանեցընէին իրենց դաշտերը, իսկ հարուստ վանքերը վարձաւորաց կամ գեղացիներու կը յանձնէին, որ վանքերուն հողագործ գերիներն էին։

Իսկ չմշակուած տեղուանք՝ ուր հողագործին բահն դպած չէր, սոճեաց, մրտենեաց և այլ և այլ հոտաւէտ թուփերու անտառներով ծածկուած էին։ Ծովեզերաց մանր խորշերուն մէջ, որք պըզտիկ նաւահանգիստներ էին, միայն քանի մը խեղճ բնակարաններ կային նաւավարաց, խանութպաններու. որոնք վանքերուն ուտելիքն կը հոգային։ Կարելի է որ այն ատենէն սկսած էին

digitised by A.R.A.R.@

զուարճութեան տեղ մը ըլլալ, ուր Բիւզանդիոնի կերուխում սի-
րող մարդիկ կը յաճախէին, ծով մնելու, երբեմն ալ անուանի
ճգնաւորաց այցելութիւն մը տալու համար։ Այս խեղճուկ խըր-
ճիթներն են, ճշմարիտ նաւահանգիստ կրնան, որ սկիզբն եղած
են հիմկուան զարդարուն ամարաստանաց։

Վերջապէս արևելեան կայսերաց երկայն շարքին մէջ, տասն
և ութի դարերու միջոց, իշխանաց կղզեաց այն վանքերը նշա-
նաւոր տեղուանքն էին։ Կղզիաբնակ Թեբայիդ մը, հասարակապե-
տութիւն մըն էր ամէն կարգի միանձանց։ Այն վանքերը մեծաւ
մասամբ հիմնուած էին իշխաններէ կամ իշխանուհիներէ, զա-
նազան կայսերական ցեղերու, որ Կոստանդիանոսին դահը նստած
էին, և ամբողջ Ցունաց կայսրութեան ատենը՝ այս կղզիները
աքսորանաց տեղ եղած են Բիւզանդիոյ երևելի մարդկանց։ Մեծն
Ներսէս՝ երկայն օրեր հոն անցուց. Ռոմանոս, Դիոգինէս, Պար-
տաս տաճիկը հոն եղերական վախճան մը ունեցան։ Մեծն Հեղինէ
որ քիչ մնաց Մեծին կարողսի ամուսինը պիտի ըլլար, հոն
բանտարկուած մնաց, և ասկէ գնաց Լեսբոս կղզին՝ ուր վրտաց
մէջ մեռաւ։ Խորհրդաւորն Մէքայէլ Բանկապէ, ամբարտաւանն
Ռոմանոս Լեգաբէն, Զոյէ Մտորին կայսրութեան այս Մէսսալինը,
Մեթոտիոս պատրիարգն, հոս առանձնութեամբ և սարսափելի
դերութեան մէջ ապրեցան։ Շատ անուանի զինուորականք, զօ-
բաւոր պաշտօնեայք, հալածեալ եպիսկոպոսունք այս կղզիները
աքսորուեցան։ Այս արևելեան կայսրութեան կղզիաբնակ և վա-
նական բանտերուն մէջ Բիւզանդացւոց կայսերաց կնքեալ նա-
մակներով հետզհետէ խրկուած են որչափ մարդիկ, որ երևելի
եղած են և հրամանատար Յոռոմ Մայրաքաղաքին, պահպա-
նեալն Կոստանդնուպոլսոյ մէջ։ Այս վանքերը տեսան բռնի ան-
կումներ և եղերական յուսահատութիւնք աթոռազուրկ կայսե-
րաց, յաղթեալ և խեղեալ թագաւորութեան թեկնածուաց, մատ-
նուած պաշտօնեից, թագաւորական իշխանաց, որք զոհ եղած են
արքունեաց ատելի նենգութեանց, կայսրուհեաց, իշխանուհեաց,
մարք և աղկունք կայսերաց, որք բռնի կրօնաւորած են այս
տեղուանք։ Այս վանքերն, կ'ըսեմ, տեսած են արեղայից խեղճ
խշտեաց վրայ մեռնելն անոնց որ այնչափ ատեն վարժած էին թան-
կագին մուշտակէ անկողնոց վրայ պառկիլ՝ թագաւորական սրբա-
զան մեծ պալատան միւսիոնազարդ և ոսկեզօծ յարկաց տակ և
կամ Պլաքհերնի կայսերական պալատան մէջ։ Այս պատճառաւ
իշխանաց կղզիք, նորէն կը կրկնեմ, հետաքրքրական են այն ամէն
մարդկանց համար, որք անցելոյն յիշատակներն կը խնդրեն։

Շարունակելի

digitised by A.R.A.R.@